ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2019 թվականի N 1804 - Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-369-15.11.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-369-15.11.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 13
Երևան

P-369_AJV-60-03_2019-12-12.docx

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-369-15.11.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առաջարկություններ չունի:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-369-15.11.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է գործին մասնակցող անձի միջնորդությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒՓՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

5-ը մայիսի 1998 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի 335-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

2. Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչեւ դատարանի կողմից վճիռ կայացնելը եթե օրենքով դիմում տալու համար այլ ժամկետ նախատեսված չէ:

Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:»:

Առաջարկվում է տվյալ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«2. Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է գործին մասնակցող անձի միջնորդությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:»:

Հոդվածի 2-րդ մասն առարկայազուրկ ենք համարում հետեւյալ պատճառաբանությամբ.

1. 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Դատավարության Օրենսգիրքը, որում նախատեսվել է առանձին հոդված՝ 168-րդը, հայցային վաղեմություն կիրառելու եւ դրա քննության վերաբերյալ՝

«1. Գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը մինչեւ գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունն իրենից անկախ պատճառներով: Այդ դեպքում հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը կարող է վկայակոչվել ոչ ուշ, քան մինչեւ առաջին ատյանի դատարանում դատաքննության ավարտը:

2. Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացված լինելու դեպքում դատարանը սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերում նշված դատավարական գործողությունները կատարելուց հետո հայցային վաղեմություն կիրառելու դիմումի եւ դրա դեմ բերված առարկությունների հիման վրա արձանագրային որոշմամբ՝

1) որոշում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը.

2) գործին մասնակցող անձանց միջեւ բաշխում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը.

3) գործին մասնակցող անձանց հետ քննարկում է նրանց կողմից ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու հարցը եւ անհրաժեշտության դեպքում սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետը.

4) իրականացնում է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:…

6. Հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը եւ գնահատմանը:

Բանն այն է, որ նախկին Քաղաքացիական Դատավարության Օրենսգիրքը դատարանի համար չէր նախատեսում դատարանի համար ընթացակարգ՝ հայցային վաղեմության հետ կապված, եւ դատարանն առաջնորդվում էր նյութական իրավունքով, մասնավորապես՝ ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հայցային վաղեմության կանոններով, որոնք նախատեսված էին 335 հոդվածով, որը վերաբերում է հայցային վաղեմության կիրառմանը:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանի համար նախատեսում էր ընթացակարգ, որը ՀՀ Քաղաքացիական Դատավարության նոր Օրենսգիրքն արդեն իսկ կարգավորում է, եւ այն էապես տարբերվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Դատարանի համար արդեն իսկ կա հայցային վաղեմություն կիրառելու ընթացակարգ, եւ ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով նման ընթացակարգ նախատեսելը դառնում է առարկայազուրկ:

2. Վերը նշվածից զատ փոփոխվող հոդվածում առկա են անհամապատասխանություններ.

(1) Հոդվածի 2-րդ մասում օգտագործված «վիճող կողմի» արտահայտությունը հակասում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության մեջ օգտագործված «գործին մասնակցող անձը» արտահայտությանը:

(2) Հոդվածի 2-րդ մասում օգտագործված «դիմումով» բառը հակասում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ 1-ին նախադասության մեջ օգտագործված «միջնորդություն» բառին:

(3) ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «դիմումով, որը պետք է տրվի մինչեւ դատարանի կողմից վճիռ կայացնելը եթե օրենքով դիմում տալու համար այլ ժամկետ նախատեսված չէ:» արտահայտությունը հակասում է ՀՀ Քաղաքացիական Դատավարական Օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված՝ «հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը կարող է վկայակոչվել ոչ ուշ, քան մինչեւ առաջին ատյանի դատարանում դատաքննության ավարտը:» կարգավորմանը:

Բացի այդ, ՀՀ Քաղաքացիական Դատավարական Օրենսգրքի 168-րդ հոդվածի 6-րդ մասը՝ «Հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը եւ գնահատմանը:» նույն իմաստով իր տեղն է գտել ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասում:

Այսինքն՝ ՀՀ Քաղաքացիական Դատավարական Օրենսգրքով նախատեսված ընթացակարգի առկայության պայմաններում ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասն առարկայազուրկ է դառնում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենքի 335-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«1. Իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

«2. Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է գործին մասնակցող անձի միջնորդությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:»: